

ԳԼՈՒԽ ԼԸ.

1 Յաղագս եթե զիա՛րդ սպարապետն Յայոց Մանուէլ, հանդերձ ամենայն աշխարհան Յայոց, ձեռն ետ ի թագաւորն Պարսից. եւ մարգպան եւ աշխարհակալ աշխարհին Յայոց զառաջինն ած ի թագաւորէն Պարսից զՍուրէն, եւ մեծաւ պարգեւաւ մեծարեցաւ ի նմանէ. եւ թէ ո՛րպէս յետոյ խորամանկութեամբ Մերուժանայ Արծրունւոյ եղեւ ապստամբութիւն, եւ պատերազմունք յուզեցան:

2 Ապա յետ այսորիկ առաքեցին Չարմանդուխտ տիկինն Յայոց եւ սպարապետն Մանուէլ զԳարջոյլ Մաղխագ, եւ ընդ նմա զբազումս ի նախարարացն Յայոց, հրովարտակաւք՝ ընծայիւք եւ պատարագաւք առ թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն եւ զնա պաշտիցեն, եւ նմա միամտութեամբ ծառայեսցեն, եւ տայցեն նմա զաշխարհս Յայոց: 3 Եւ չոզան հասին Գարջոյլն, եւ որք ընդ նմայն էին, ի դուռն թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտակսն զտիկնոջն եւ զսպարապետին Յայոց, եւ ետուն նմա գլղեալ պատգամսն հնազանդութեան: 4 Եւ յորժամ ետես զնոսա թագաւորն Պարսից, մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնոսա, եւ մեծապէս մեծարանաւք պատուեաց զնոսա, եւ մեծաւ պարգեւաւ առնէր զԳարջոյլն:

5 Եւ ընդ նմա առաքէր յերկիրն Յայոց զՍուրէն պարսիկ մի ճոխ եւ նախարարացն իւրոց. եւ ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Յայոց ի թիկունս աւզնականութեան զաւրավարին Մանուէլի, եւ պահել ի թշնամեաց զտիկինն զՉարմանդուխտ: 6 Եւ ետ թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ եւ պատմուճան, եւ զվառ թագաւորացն տիկնոջն Չարմանդուխտոյ, եւ թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ եւ Վաղարշակայն: 7 Չոյն եւ սպարապետին Մանուէլի տոյնպէս ետ տանել զթագաւորական պատմուճանն, սամոյր մ՛ եւ զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ, ու ի պատիւ գլխոյ ի վերայ զագաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարհանդ հանգոյց, եւ լանջաց պատիւ՝ ապիզակ, որպէս արեւնք են ունել թագաւորաց. եւ շիկակարմիր խորան, եւ ի վերայ խորանին արծուի նշան, եւ սրահակս մեծամեծ եւ կապուտակ երկնագոյն հովանոցս: 8 Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուէլի. եւ տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանութիւն մեծ ի վերայ աշխարհին Յայոց:

9 Եւ եկն եհաս Գարջոյլն խորխոռունի յերկիրն Յայոց, եւ եած զՍուրէն պարսիկ՝ տասն հազարան: 10 Եկին բերին զպարգեւսն տիկնոջն եւ մանկանց նորա. տոյնպէս սպարապետին Մանուէլի. ունէին պարգեւս իւրաքանչիւր աւագացն, եւ տանուտերացն իւրաքանչիւր մեծամեծացն Յայոց: 11 Եւ